քը, ինք պիտի ստիպուի քալել Կովկասի վրայ· ահա բուն պատճառը թէ ինչո՛ւ Պետրոս Մեծ կը դադրեցնէր իր զինուորական նուաճումները Պարսկաստանի ու Անդրկովկասի մէջ, ու կը դառնար Աստրախան։

Պետրոս Մեծ թէեւ զգուշանալով միջազգային բարդութիւններէ կը դադրեցնէր իր յաղթական արշաւանքը, բայց միւս կողմէ իբրեւ խոհեմ դիւանագէտ յարաբերութեան մէջ կը մտնէր Թուրքիոյ հետ, իրաւական վիճակի վերածելու համար Կասպից ծովի եղերքը դրաւած իր երկիրները· զանազան բանակցութիւններէ ու զիջումներէ յետոյ, 1724 թուականի Յունիս 12ին կը յանդէին համաձայնութեան մը, Պոլսոյ մէջ կնքելով Ռուս–Թրքական դաշնագիրը, որու զօրութեամբ՝ Ռուսիոյ կը մնային Կասպից ծովի եղերքի հողերը, իսկ Թուրքիոյ ազատ ասպարէզ կը տրուէր Անդրկովկասի պարսկական հողերու վրայ։ Այս դաշնադրութեամբ Հայերն ու Վրացիները կը ձգուէին իրենց բախտին ու ճակատագրին, իսկ ազատագրական շարժումը կ'ընդունէր մահացու հարուած մը։*

(Շար· 2) Հ· ՍԱՄՈՒԷԼ ԱՐԱՄԵԱՆ

*) Ծանօթ·— *Առանձին մասով պիտի ներկայացուի օգտագործուած աղբիւրներու ընդարձակ մատենագիտութիւնը, մանրամասն նշումներով եւ յարակից բացատրութիւններով։*

ԲՆԱԳԻՐՆԵՐ - ՎԱՒԵՐԱԳՈՒՂԵՐ - ԴԻՒԱՆԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

ԱԲՐԱՀԱՄ ԵՐԵՒԱՆՑԻԻ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ 1721-1736 ԹՈՒԻ»

(Շար· տե՛ս «Բազմավէպ», 1974, թ· 3–4, էջ 278–305)

Ձեռագիր Ս· Ղազարի, թ· 2717
Բնագիր Աբրահամ Երեւանցիի

(ԳԼՈՒԽ Գ·)

6ա | *Օսմանցին իւր մեծ հզօրք գալ Երեւանայ վերայ։ Եղեւվարդայ վեր կացաւալ մինչ ի Երեւան, գ [=3] ավուրն հասալ Երեւանայ մօտն, մին Սամբթէկի Դալմայ կասեն, ջրի վերէն, տեղն նստալ Աբդուլայ փաշէն։ Մինչ ի Երեւան կէս ժամէն տեղայ։ Երեւանանայ դ [=4] կողմի դեղն եւ գավառն բօվանդակ փախի եկին մտին քաղաքն։*

Ձեռագիր Ս· Ղազարի, թիւ 2681
Խմբ· (Հ· Մատթէոս Եւդոկիացիի)

[ԳԼՈՒԽ Գ·]

Յաղագս պաշարման Երեվանայ եւ պատերազմացն քաղաքացոց· թէ ո՞յք էին ի Հայոց որք յամենայն սրտէ մարտնչէին յանպարիսպ արձակաքաղաքի անդ եւ զորքանս կոտորեցին յօսմանցոց։

Զու արար Աբդուլլա փաշայն ի դաշտէ անտի եղեվարդայ, եւ եկն բանակեցաւ ի տեղի մի հանդէպ Երեվանայ՝ Սամբէկի Դալմա անուանեալ յանուանէ ջրմղոյն, որ անդ լեալ է։ Եւ որք չուրջ զԵրեվանաւ գտան բնակք ի դեղս եւ յաղարակս, ամենեքեան փախուցեալք ի քաղաք անդ մտին։

© National Library of Armenia

Է [=7] օր անցավ, օսմանցին չէր գնացել յէջմիածին. Ըղամբօլու մին Ֆարման էկավ թէ՝ «Ցէջմիածնու հեղ բան չունէք»: Էն թարիղին Աստուածայտուր կաթուղիկոսն յէջմիածին չէր, շահ Թամազն ուղել էր, գնացել էր Թարվէղ:

Ցետի օրն յառաջ գնաց մօտն բերդին, մօտ սուրբ Ամենայն Փրկիչի լանչին, թօփերն սահմանեց օսմանցին, սուրբ Մատուռ կասեն իթ [=29] թօփ տեղն սահմանեց, ժբ [=12] թօփ Ամենափրկչի լանչին սահմանեց, Է [=7] թօփ՝ գ [=3] բլուրի լանջին սահմանեց թօփերն. կրակեց ի վերայ քաղաքին. դ [=
6բ 4] կողմն. առավ քաղաքի օսմանցին, ոչ կարեցավ | դուս դալ պարսից մարդն:

Եւ յետ եօթն աւուրց պաշարման Երեվանայ, մինչդեռ հէնն օսմանցւոց չեւ եւս յէջմիածին մխեցեալ էր յասպատակել, եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլտանէն, յորում պատուիրէր փաշային անխայել յէջմիածին եւ ոչ կոխան տալ զօրաց իւրոց, պահապանս դնել նմա յիւրոց անտի զօրաց, զի մի՛ ոք ինչ յափըշտակիցէ անտի, կամ խուիցէ զոք անդ յեղելոց: Եւ եղեւ այս ի յաջողելոյ խնամոց զԹուրքեանն Աստուծոյ: Զի ի ժամանակին, յորում լինէր զօրացն օսմանցւոց ի Հայաստան մխել, ոմն բարեպաշտ մեծատուն ի հայոց ազգէ, Սեղբոս անուանեալ, որ ի-
բաց պիտոյից արքունի պաղատանն ծառայելով, շնորհս գտեալ
7բ էր եւ էր ինքն անուանի | քան զամենայն մեծամեծս հայոց, որք ի Կոստանդնուպօլիս են, բարեխօս եղեալ էր վասն էջմիածնին, որպէսզի առ խնամս ազգիս հայոց եւ առ օգուտն արքունի հրաման տացէ սուլտանն եւ պատուիրեսցէ փաշային՝ ի սուրբ էջմիածինն անխայել, եւ ոչ թոյլ տալ զօրաց իւրոց զայն սուրբ տեղին ասպատակել: Եւ փաշայն, ըստ բանից սուլտանին հրովարտակի, զգուշացոյց զզօրսն յասպատակելոյ, եւ եղ անդէն գունդս զինուորաց ի պահպանութիւն: Ընդ յայսոսիկ աւուրս Աստուածատուր կաթուղիկոսն Հայոց ոչ կայր յէջմիածինն, այլ ի Թաւրէզ առ Թամազ շահն գնացեալ էր:

Եւ յորժամ Աբդուլլա փաշայն դիմէր յառաջ՝ առնուլ զբերդն Երեվանայ, նախ պատգամաւորս առաքեաց խօսիլ ընդ նոսա բանիւք խաղաղութեան, զի առանց զինու մարտի տացեն զբերդն: Պատասխանի արար նմա իշխան քաղաքին, որոյ անունն էր Միհրալի, եւ ասաց, թէ «Առաքեսցուք զքանս ձեր առ շահն մեր, եւ եթէ հաճեսցի եւ հրաման տացէ մեզ, տացուք ձեզ զբերդն. իսկ եթէ ոչ, ոչ իշխեմք մեք մեզէն տալ»: Իբրեւ ետես փաշայն,

Երեւանայ խանն, որ կասեն Միհրալի խան, հրայման ետ, քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մէջն մտավ, կռիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի կ [=60] օրն: Շատ բաղում օսմանցի սրօվ անցան, ոչ կարաց օսմանցին մտանել քաղաքն: Օսմանցին փորքայցավ, Աբդուլայ փաշէն ղրկեց Բէյայզիդու լեռ. [=35·000] քուրդ եկավ, նորանք էլ ոչ կարեցան մտնել քաղաքի մէջն: Շատ բաղում հղօրն սրօվ գնաց օսմանցու աջիզ եղան:

Աբդուլայ փաշէն դիր ղրկեց դաղաւորի սուլթան Ահմատին թէ՝ «Ցերեվանայ հղօրքն շատ այ, չեմ կարում առնել»: Հրայմանեաց թաղայորն, Քօթէհահեայ փաշան ժռ [=10·000] հղօրօք եկավ, եհաս Երեւան: Նորա զօրքն գնաց Երեւանայ տակին, Նորայ-դավիթ կասեն, նորա մոտ իջավ հղօրքն նորա:

զի այս ոչ էր պատասխանի՝ խաղաղութեամբ տալոյ զբերդն, պատրաստեցաւ ի պատերազմ:

8ա | Ապա յառաջ մատոյց օսմանցին զզօրս իւր հանդէպ Երեվանայ պաշարել գնա եւ սկսաւ զդրսն կարդել, կառուցանել եւ արձակել ի վերայ բերդին:

Ցայնժամ հրաման ետ Միհրալին պարսկացն՝ երթալ խառնիլ ընդ հայսն, եւ ի միասին մարտնչիլ: Մարտ եղին ընդդէմ օսմանցւոց զաւուրս վաթսուն, եւ զբազումս կոտորեցին ի թըշնամեաց, եւ ոչ ետուն նոցա մտանել ի ներքս: Տեսեալ Աբդուլլա փաշային զնուազիլ իւրոցն՝ առաքեաց ի մարըս եւ կոչեաց անուի յիւր թիկունս. եւ եկին ի նոցանէ լեռ. [=35·000] վառեալք ի պատերազմ, եւ ոչ նոքօք կարաց յաղթել քաղաքին:

Իբրեւ ետես փաշայն զհաստատութիւն քաղաքացւոցն եւ զնուազութիւն իւրոցն, լքաւ այնուհետեւ զզօրսն յառաջ մխելոյ: Եւ առաքեաց հրովարտակ առ սուլտան իւր ասել, թէ «Բազում են զօրք քաղաքիս, եւ ի մէնջ անկան բազումք. (զի՞նչ արդեօք հրամայես մեզ առնել. առաքե՞ս մեզ զօրս ի թիկունս եւ
8բ կամ հրաման տաս դառնալ յետս[1])»: | Ցայնժամ սուլտանն հրամայեաց փաշային Քոդահիոյ հասանիլ նմա ի թիկունս: Եւ եկն եհաս նա տասն հազար վառեալ զօրօք եւ բանակեցաւ մերձ:

1. զի՞նչ արդեօք... դառնալ յետս հատուածը դրած էր փակագծի մէջ. ձեռագրի թղ. 88ա-ի վրայ կը ծանօթացնէ մեզի ասոր պատճառը՝ գրելով. «Սկսայ զիմ շարադրեալն ընդ աշխարհաբարին բաղդատել, եւ բանս գտի, որ ոչ բառառնութեամբ, եւ ոչ զօրութեամբ գոյր յաշխարհաբարին, փաբենթազիզաւ փակեցի»:

© National Library of Armenia

7ա գ [=3] օր անցկաց|ավ, փաշէքն մէկ տեղ եկին մասլըհաթ արի, հինգշաբաթ օրն քաղաքի վերայ երիշ պիտեն անել։ Հինգշաբաթ օրն որ լուսացավ, տասնեւմինսը հոգին, Աստուած փըրկէ, Տէրն ազատէ, օսմանցին երիշ արավ, սրով եւ թրով, Զանգու ջուրն կասեն, մեծ գետ այ, որ ձիայորքն չի կարալ անցնիլ, այնպէս լցվեց օսմանցին այս ջրիս մէջն, որ ջուրն կտրվեց եւ ցամաքեցաւ։ Օսմանցիք մտան քաղաքն. յառաջի ըսկիսքն քրիստոնէն կռվեց մինչ ի կէս օրն։ Հայերի մեծայորն էր Հունդի բէկենց Յոհանն, Քէչի բէկենց Պողոսըն, Միրզայջանենց Թալի, Կառճիկ Օվանէսն. այս մեծայմեծկս ըսկսեցին կռվիլ օսմանցուն հետ։

Զորայգեղեցի Գրիգոր վարդայպետն, ինչափ որ ժողովուրդ ունէր, բովան առավ մտավ Զորայգեղայ Սուրբ Սարգիս վանքըն։ Էն օրն բռ [=2·000] քրիստոնայ սրով անցան. տաչիդըն փախավ մտավ բերդի մէջն, քրիստոնէն մնաց ի քաղաքի մէջն։

Եւ յետ երից աւուրց ի մի վայր ժողովեալ փաշայքն, խորհեցան եւ եւս յառաջ մղել զզօրսն. եւ այլ ոչ թուլանալ։ Եւ ի լուսանալ առաւօտու, յաւուրն հինգշաբաթի, յառաջ մղեցին զզօրն եւ մերձեցան յարձակաքաղաքն Երեվանայ։ Եւ զի դետ մեծ կայ առաջի քաղաքին, Զանգու անուանեալ, եւ եղեւ ընդ անցանելն իւրեանց զայն գետ, ծածկեաց բազմութիւն նոցա զերեսս ահագին ընդարձակ գետոյն, եւ իբր ցամաքեալ՝ ոչ երեւէր ջուր գետոյն։ Եւ էանց օսմանցին ի գետն եւ եհաս քաղաքին եւ ոչ կարաց միանգամայն յառաջ խաղալ, զի մարտիկքն քաղաքին մարտ եղեալ ընդդէմ նոցա՝ արգելուին մինչեւ յօր հասարակ։ Եւ սոքա էին միայն հայք, քանզի պարսիկքն ընդ
9ա իշխանի քաղաքին[2] փա|խուցեալ ի բերդն ամրացան եւ զհայսն թողին յանպարիսպ քաղաքի անդ մարտնչիլ։ Յայնմ աւուր երկու հազարք ի քրիստոնէից ի սուր անկան։ Եւ գլխաւորք պատերազմողացն հայոց էին սոքա. Հունդիբէկեան Յոհաննէսն, Քիչիբէկեան Պողոսն, Կառչիկ Յովհաննէսն եւ Միրզէջանեան Դաւիթն։

Վարդապետ ոմն էր ի քաղաքի անդ, Գրիգոր անուամբ. սա մտեալ ի վանս սրբոյն Սարգսի, որ ի Զորագիւղ անուանեալ Թաղի անդ է. զրազմութիւն ժողովրդեանն հայոց կոչեալ ժողովեաց յայն վանս, եւ յառաջնում ժամու գիշերոյն սկսան խոր-

2· Քաղաքին անունին տեղը դատարկ թողուած է ձեռագրին մէջ։

7բ | Գրիգոր վարդապետ խնդրեց, ինչ որ ժողովուրդ կէր, եկան տեղն, դիշերվայ մին ժամին տեղն խորհուրդ արին. «Որպէս անենք վաղն օսմանցին մեզ զյուրն կու քաշայ, մեր արդարներն դերի կու վարէ»։ Իւրեանց պատրաստութիւն տեսին, ղրկեցին, Կոնտի Թաղ կասեն, որ հարիւր տուն բոշայ կայ, քրիստոն մեծ մեծ իշխանք, դանձայ տէր բոշէք։ Մինն որ է Բաբուռ օղլի Ղազարն, մէկն Կլդուղն, մէկն Դաւիթն, մէկն Բէյրամըն, մէկն Պետրքն։ Այս հինգ բոշէս բովայտակի բոշէքանց մեծայորքն են։ Բոշէքն եկան վարդայպետին մոտ։ Վարդայպետն Գրիգոր աստուածայբան, ըսկսեաց աղաղակ, աղաղակել ժողովուրդին, լալով աչքով աղերսալի։ Բոշայ Ղազարն ասաց. «Վարդայպետ, երկու հարիւր պատվայկան մարդիք ունիմ, իւրանց թրերովն, իւրանց թվանքներովն»։ Այս չինեց սահմանեցին։ Զորայգեղեցի Հունդու բէկենց Յոհանն ըսկսեց մարդ ժողովէն, Պրն. Փերի-

---

հուրդ առնել մեծամեծքն ընդ վարդապետին եւ ասեն. «Զի՞նչ արասցուք. վաղիւն զմեզ զամենեսեան ի սուր սուսերի մաշէ օսմանցին եւ զկնայս եւ զմանկունս մեր ի գերութիւն վարէ»։ Եւ խորհեալ հաստատեցին ի մէջ իւրեանց առնել, զոր կարեւոր
9բ տեսանէին ի փրկութիւն անձանց իւրեանց եւ զաւակացն։ | Ի քաղաքի անդ ի տեղին որ Կոնդի Թաղ անուանիւր, էին քրիստոնեայ բոշայք, ՃԱ [=100] տուն, մեծատունք եւ քաջասիրտք, վարժք զինու պատերազմի։ Եւ նոցա գլխաւորք ի ժամանակին յայնմիկ էին սոքա։ Առաջին էր պարոն Ղազարոսն Բաբուրեան, երկրորդն էր պարոն Կլդուղն, երրորդն էր պարոն Դաւիթն, չորրորդն էր պարոն Բէյրամն, եւ հինգերորդն էր պարոն Պետրոս։ Սոքա եւ այլքն առհասարակ կոչեցեալք՝ եկին ժողովեցան առ Գրիգոր վարդապետն։ Յայնժամ ժողովուրդքն վարդապետին հանդերձ լալագին աղաղակեցին առ նոսա յօդնութիւն հասանիլ, զի կարասցեն զանձինս իւրեանց եւ զկնայս եւ զմանկունս զերծուցանել յանօրինաց, որք հասեալ պատեալ պաշարեալ տաղնապեն, եւ յարձակին յաւար հաբկանել։ Պատասխանի ետ Ղազարն եւ ասէ ցվարդապետն. «Վարդապե՛տ, ահաւասիկ ես զերկու հարիւր քաջամարտիկ երիտասարդս ունիմ, որոց
10ա ամենեքեան ունին զզէնս եւ վարժք | են սրոյ եւ հրացանաց արձակելոյ, զնոսա ես ժողովեցից եւ նոքօք հանդերձ ոգւով չափ պատերազմեցայց»։ Զհետ Ղազարու, եւ այլ մեծամեծքն հայոց խոստացան զնոյն առնել, որք էին՝ Ունդուբէկեան պարոն Յոհանն, պարոն Փիրիդուլն, պարոն Արզումբէկն, պարոն Թա-

© National Library of Armenia

դուլն, Պրն. Արզում բէկն, Պրն. Թաթոսն, Պրն. Մլուն, Պրն. Մկրտիչն, Պրն. Մախլասն, Պրն. Նիկողոսն, Պրն. Սրիպիոնենց Ավետն, Պրն. աղայ Զատէն, Պրն. Նուրի, Պրն. Զօհրաբը՝ն, Պրն. Ալեքսանը՝ն, Պրն. Աչամն, Պրն. Գալուստն, Պրն. Էրամն։

8ա Սորանք գիշերն խուրհուրդ | արին իւրեանց մէջն, բաղում հզօրք չինեն, որ յառավուտուն թէ օսմանցի գայ ի քաղաքի մէջն, հազիր լինեն, կուվեն։ Լուսացավ յառայվօտն, Աստուծոյ ողորմութիւնն հասավ, օսմանցին չըմտավ քաղաքն, որ է օրն յուրբաթ։ Էն յուրբաթ օրն քրիստոնէքն իւրեանց պատրաստութիւն տեսին. Փարայքար մին գեղ այ. Գոգումբէթ մին գեղ այ, Կայվայկերդ մին գեղ այ, Ցառինջ, Ցավան, Գավան, Զագ, Նորայգեղն, բօվայդակ այս գեղերիս մարդն մտել ի քաղաքն. այս գեղերուս մարդն կամ քաղաքի մարդն կամ գեղերի մարդն միայորեցան, բօվանդագ եղան ամենեքեան, որ պատվայկան բան այ, կան մարդիդն եղան թռ [= 9·000] քրիստոնեայ, որ այս բանայկան այ, անբանն ոչ կարայ առնուլ ի ձեռն սուր։ Այսպէս յառայվօտուն լուսայցավ շաբաթ օրն, բօշայ Ղազարն, բօշայ Կլդուղն, բօշայ Դավիդն, Պետիկն, իւրեանց հզօրվն եկին Զորայգեղ, որ ունին սոգանք հզօրք ունին քՆղդ [= 234]։ Հրայման յետ Գրիգոր վարդայպետն բօշէքանցն, թէ «Դուք պահեցէք խ [= 40] ջաղացի ճանայպարն». | Զորայգեղայ հզօրքն,

8բ

դէոսն, պարոն Մղունն, պարոն Մկրտիչն, պարոն Մալխասն, պարոն Նիկողայոսն, պարոն Սրապիոնեան Աւետիսն, պարոն Աղազատէն, պարոն Նուրին, պարոն Զօհրապն, պարոն Ալէքսանն, պարոն Աղամն, պարոն Գալուստն եւ պարոն Երամն։

Սոքա ամենեքեան միաբան ի միասին խորհուրդ արարեալ ժողովեցին զընտիր ընտիր երիտասարդս ի գիւղօրէիցն Երեւանայ եւ եղեն ինն հազար վառեալք ի պատերազմ, ի Փարաքարայ, ի Գուգումբեթայ, ի Կաւակերտայ, ի յԱռընչոյ, ի յԱւանայ, ի Զագաւանայ, ի Զագայ եւ ի Նորա գեղջէ. զի ամենայն այր կարող պատերազմի գիւղօրէիցս այսոցիկ եկեալ ժողովեալ կային յարձակաքաղաքն Երեւանայ։ Այլ եւ ի քաղաքէ անտի Երեւանայ ի Թաղէն, որ Հին Երեւան կոչի, ժո|ղովեցան բաղում խումբք երիտասարդաց վառելոց ի պատերազմ, որոց կառավարքն էին գօտէմարտիկ Նիկողայոսն, Մարիամեան որդի Անտոնիոսն եւ Խաթունեան որդի Բութիկն եւ տէր Մովսէսն։ Եւ ամենեցուն գումարն եղեւ ինն հազար չորս հարիւր քառասուն եւ երեք սպառազէն քաջ պատերազմօղք, ամենքեան վա-

10բ

որ է գռ [= 3·000] պատվայկան գեղից մարդիք, ունեն գովայկան սրեր եւ կամ թվանքներ, սոցանց հրայման ետ Մակ-քար կասեն, տեղն պահեն։ Եկին Կունդի Թաղի հզօրքն, սոքանք դարբասանի ճանայպարհն պահելով. եկին Զուհայրենց Թաղի հզօրքն թՆծե [= 955] պատվայկան մարդիդ, սրով եւ թրով, Տէր Մովսէս կասեն, սոցանց մեծայորքն այ, սոքանք Դարբինոցի ճանայպար կասեն, տեղն պահելով։ Եկի Հին Երեւանայ Թաղի հզօրքն, որ է մեծ հզօրք, դռ [= 4·000] պատվայկան մարդիդ, սոցանց մեծայորքն էր Փայլէվան Նիկողոսն, որ է Նալբանդ. մին մեծայոր էլ Մարիամի որդի Անդոնն. մին մեծայոր էլ Խաթունի որդի Բութիկն։ Այս դռ [= 4·000] հզօրքդ ունին երեք մեծ մեծայոր։

Եկին բօվանդակ Զորայգեղ թռդՆիգ [= 9423] հզօրք, որ պատվայկան կուվարար. մնացեալն կային մինչ ի իքռ [= 28·000] արայկան եւ իդական, որ անպէտ են, բաց թողին իւրեանց ի վերայ տներուն, որ նստեն տներուն պահայպան լինեն։ Մնացեալն կռիվ անօղն, սրերն կապած ի մէջ Զորագեղու լցվեցան։

9ա Դարձեալ ծանիր | օսմանցին քաղաքի դ [= 4] կողմն պատել էր, ոչ կարէր մտանել քաղաքն դ [= 4] կողմէն, զէրայ քաղաքի մէջն բօվայդակ պարտէզ եւ բուրաստան այ, յայգեստան այ, երկու ղուն ունէր, օսմանցի ոչ կարէր մտանել ի քաղաքն. զէրայ, Զորայգեղու կողմն ոչ կայ բուրաստան պարդէս, բաց է, ոչ կայ ծառ, ոչ կայ յայգեստան, հանայպաղ օսմանցին տեղէն երիչ կանէր, հանայպաղ թօփերն կրակելով ի վերայ քաղաքի։

ռեալք սուսերաւ եւ թվանկաւ։ Սոքա ամենեքեան զկանայս եւ զմանկունս եւ զարս անպէտս մարտի ի տունս իւրեանց թողեալ՝ եկին գումարեցան կառավարչօքն իւրեանց հանդերձ ի Թաղ մի Երեւանայ, որ Զորագիւղ անուանի, պատերազմիլ վասն անձանց եւ վասն կանանց եւ որդւոց իւրեանց։ Եւ բաշխեցին իւրաքանչիւր Թաղից դունդս դունդս՝ պահել զմուտս ճանապարհաց քաղաքին։ Եւ կային պատրաստութեամբ, զի եթէ ի ներքս մխեսցին զօրքն Թշնամեաց, պատերազմեսցին, իսկ եթէ ոչ, ըզմխեսցին զօրքն Թշնամեաց, պատերազմեսցին, իսկ եթէ ոչ, ըզ-

11ա տեղի կալցեն։ Զի շուրջ | զքաղաքաւն էին պյդիք եւ ծառատունկք ուռեաց բաղում խիտք, զորս ի վաղ ժամանակաց տընկեալք էին լինիլ ի պահպանութիւն, ի պատսպարութիւն քաղաքին։ Իսկ եւ արտաքոյ ծառաստանացն էր մեծ դեռն Զանգու, եւ վասն սմին իրի զօրն օսմանցւոց զանդիտէր միանգամ

© National Library of Armenia

Երեւանայ խանն, որ է Մէհրալլի խանըն, մէլիք Սըհակն, մէլիք Աղամալի որդին, եւ իւր աղպեր աղայ Վէլին, Պրն. Կարայպետն, Պրն. Բարխուդարենց Մուքէլն, Մոծակենց Բաբայ-ջանըն, երկոտասան մեծ իշխանք, Միհրալի խանըն իւրեանց դստրօվն տարավ ի մէջ բերթն: Մնացեալ փորքն իշխաներն սըկսեց իւրեանց պատրաստութիւնն տեսել. Եասամանի որդի Ցարութիւնն, քրիստոնայքն էլէի պատրաստեցին՝ որ ղրկեն փաշին մոտ: Այս Ցարութիւնն, քրիստոնէս, որ անցավ Զանգու գետն, օսմանցու ենկիչարին, ոչ եթող գնայ հասանի փաշին, ըսպանեցին զնա: Քրիստոնէքն ըսկսեցին իւրեանց պատրաստութիւն տեսանել: Էն թարիղին զռ [=3·000] Մըսըրայ՝ ղուլ եկավ, Նորայդեղի տակին նստավ, յառանց փաշի հրայմանին ե-
9բ րիշ արին քաղաքի վերայ, | կողմօվն Զորայդեղայ՝ մտավ ի քաղաքն օսմանցին: Զորայդեղու հղօրքն յաղտվեցավ, փախավ, եկ ի խ [=40] ջաղացայ տակն: Գրիգոր վարդայպետն ղրկեց

մայն ի քաղաք անդ մխիլ, զի ի մէջ խիտ ծառաստանաց անհնար էր զէնս ի գործ արկանել, այլ զտեղի առեալ յայնկոյս գետոյն՝ զդրաս արձակէր ի վերայ քաղաքին եւ զհնարս խընդրէր յառաջ ընթանալոյ: Եւ երբեմն երբեմն ըստ մասին յառաջ մխիւր, ոչ ընդ իւրաքանչիւր կողմն քաղաքին, այլ ընդ կողմն Զորագեղջ, ընդ որ կողմն նուազ էր ծառատունկ:

Իսկ իշխանն Երեվանայ եւ ամենայն մեծամեծք նորա ի ներքս ի բերդի անդ կային եւ անտի զդրաս արձակեալ պատերազմէին: Սակայն յետ մերձենալոյ զօրացն օսմանցւոց ի քաղաք անդ՝ այնուհետեւ դրքն նոցա առ ոչինչ օգտէին, զի դրքն ի բարձուստ արձակեալ զառաջիկայ մերձաւորսն ոչ կարեն հար-
11բ կանել, այլ զպատշաճ հեռակայս: | Իշխանն Երեվանայ առեալ էր ի ներքս յամրոցն Երեվանայ ի մեծամեծացն հայոց զերկոտասան անձինս ամենայն տամբն նոցա, որոց գլխաւորքն էին մէլիք Սահակն՝ մէլիք Աղամալի որդին եւ եղբայր նորա Աղայ Վէլին, պարոն Կարապետն, Միքայէլ Բարխուդարեան եւ Բաբաջանն Մոծակեան եւ այլք ընդ սոսա:

Արդ, իբրեւ այնպէս պատրաստութեամբ կային քրիստոնեայքն արտաքոյ բերդին, եկին եւ այլ երեք հաղար զօրք յեգիպտացւոց կուսէ յօգնութիւն օսմանցւոց եւ բանակեցան առ Նորագիւղիւ առանձին: Եւ լեալ սոքա յանդգնագոյնս քան զառաջինսն՝ առանց կարգի եւ հրամանի դքսին իւրեանց Աբդուլլա փաշային, գաղանաբար յարձակեցան յառաջ՝ ի քաղաք անդ

հետեւ բօշէքանց, թէ՝ «Զորայդեղայ հղօրքն յախտվեցաւ, շուտօվ դաք»: Լսեցին այս բօշէքն, վաղվաղակի դալօվ Զորայդեղի թաղն: Օսմանցին առել այ մինչ ի Զորայդեղու կէսն, ոչ է կարում դալ յառաջ, երկուղն շատ է օսմանցու, վախում է դալն յառաջ: Վարդայպետն ըսկսեց աղաղակել լալօվ աչօք աղերսալ ի բօշէքն: Բօշէք ըսկսեցին յաջն համբերել վարդայպետի: Բօշէքն բնլդ [=234] հղօրօվ, Զորայդեղու հղօրօվն, ըսկսեցին կռվել ի մէջ Զորայդեղայ վերայ: Հայոց հղօրի կռվի տեղն բայցրայդուն է, օսմանցու կռվի տեղն ցացայդոյն է: Ըսկսեցին բօշէքն թվանքներն կրակել ի վերայ օսմանցու: Օրն է երկուշաբթի, Աստուծոյ ողորմութիւն հասավ, յախդվեցավ օսմանցին, զռ [=6·000] օսմանցին անցավ սրօվ, ռգն [=1·300] քրիստոնիցն անցավ սրօվ: Օսմանցին փախավ, անցավ ի Ջուրն Զանգու, գնաց իւրեանց եօթեվանըն: Աբդուլայ փաշէն բարկա-
10ա ցավ ինքինքեան, ոչ եթող ենկիչարին | երիշ անելու:

մխիլ, ընդ կողմն Զորագեղջ, եւ զհետ նոցա այլք եւս բազումք յառաջնոցն խառնաղանջք: Համարէին սոքա զգործն յաղթութեան ինքեանք միայն վճարել եւ առանձին զանուն եւ զփառս քաջութեան ժառանգել, միանգամայն եւ աւարին յառաջ քան
12ա զա|ռաջին զօրսն հասեալ ի վերայ՝ զչար ցանկութիւնս իւրեանց լիագոյն լնուլ: Եւ եղեւ ի մխիլն նոցա ի թաղն Զորագիւղ անուանեալ՝ տկարացան մարտիկքն, որք անդ կային, եւ փախեան յերեսաց նոցա մինչեւ ի թաղն Աղօրեաց: Ադդ եղեւ բօշայիցն, որք յայլ թաղս կային, եկին հասին անդ երեք հարիւր միանգամայն եւ մարտ եղեալ սրով եւ թվանգաւ՝ յաղթեցին թշնամեաց խնամօքն Աստուծոյ եւ կոտորեցին ի նոցանէ զվեց ռ [6·000] եւ զմնացեալսն ի փախուստ դարձուցին: Զի տեղին, ուստի մարտնչէին քրիստոնեայքն, էր բարձր, եւ տեղին թըշնամեացն էր ցած: Բայց յայնմ աւուր անկան ի քրիստոնէից ոգիք իբրեւ հազար եւ երեք հարիւր: Տեսեալ Աբդուլլա փաշային զանկարգութիւն եգիպտացւոց՝ բարկացաւ սրտմտութեամբ եւ պատուէր ետ իւրոցն՝ առանց հրաման տալոյ իւրոյ մի՛ ոք յառաջ խաղալ:

© National Library of Armenia

(ԳԼՈՒԽ Դ.)

Զէրայ սուլթան Ահմատն հրայման էր տվել Սարու Մուստայֆայ փաշին, մին ալ Ըռաջաբ փաշի, թէ «Գնաք Երեւանայ վերայ»։ Նրանք չէին հասել, չեն եկել, խաբար եկավ Արդուլլայ փաշին թէ «Սարու Մուստաֆայ փաշէն գալիս այ Ըռաջաբ փաշին հետ»։ Մինչ ի Ըռաջաբ փաշի գալն ըսմխանքամ երիչ արին Կոնդի թաղի վերայ, այնչաբ որ ենկիչարի որ կէր, բօվանդակ գնացել են որ Կոնդի թաղիցն երիչ անեն։ Մեր հայքն բօվայնդակ գնացին Կոնդի թաղն. ըսկսեց օսմանցին մտանել քաղաքն։ Բօշէքն պատվայկան կռիվ կանեն. եկավ կռիվ։ Քրիստոնէքն յաղթեցին օսմանցուն, եփախ օսմանցին դուրս ի քաղաքէն։ Ին կռվին դն [=400] հայք, խ [=40] բօշայ սրատվեցան, ոչ մեռան, հիվանդացան։ Օսմանցին ոչ է կռվել ի վերայ քաղաքին, միչ ի գալն Ըռաջաբ փաշի եւ Սարու Մուստայֆայ փաշի։ ժե [=15] օրէն յետ եկան, բ [=2] փաշէ խորհուրդ արին իւրեանց չար։

[ԳԼՈՒԽ Դ.]

Տկարանալն Հայոց պատերազմողաց. զպատգամաւորս խաղաղութեան յղելն նոցա առ օսմանցին. առումն արձակաքաղաքին Երեվանայ եւ կոտորումն զօրացն Հայոց եւ գերիլն տանց նոցա։

Հրաման եղեալ էր ի սուլտանէն առ Սարու Մուստաֆա փաշայն՝ երթալ ի վերայ Երեվանայ, նիզակակից մարտակից լինել Արդուլլա փաշային, եւ նա զիտէր, զի զալոց էին։ Ազդ եղեւ
12բ Արդուլլա փաշային, թէ ահա | Սարու Մուստաֆայն եւ Ռաջաբն մերձ են հասանել։ Այլ նա, մինչչեւ եկեալ էին, միւսանգամ յառաջ մղեաց զզօրսն ընդ կողմն, որ Կոնդի թաղ կոչի։ Յայնժամ զունդքն հայոց աճապարեցին յայն կողմն՝ զդէմ ունել նոցա, մարտ եղին քաջութեամբ, հարին զնոսա եւ ի բաց դարձուցին։ Յայնմ նուազի չորեք հարիւր սպառազէնք ի հայոց անտի, եւ քառասուն բօշայք եղեն խոցք եւ անկան ի մահիճս, այլ ոչ մեռան։ Յայնմհետէ այլ ոչ եւս յաւել զօրն օսմանցւոց յառաջ մխիլ մինչեւ ի գալ երկուց փաշայիցն, զորս ասացաք, եւ յետ հնգետասան աւուրց եկին հասին երկու փաշայքն, ԼԸ [38] հազար զօրօք։ Եւ եղեւ յետ հասանելոյ նոցա խորհուրդ արար ընդ նոսա Արդուլլա փաշայն ի չորից կողմանց յառաջ

Քրիստոնէքքն լսեցին որ երկու փաշայ եկավ, երկու փաշին վերայ ԼԸ [=38·000] հազօրք, քրիստոնէք Գրիգոր վարդայի մոտ գնացին, ասին. «Ինչպէս անենք վարդայպետ»։ Ասաց վարդայպետն. «Որդիք, մին էլչին չինենք, ղրկենք փաշին»։ Քրիստոնէքն վախում են գնալ էլչութեան, զէրայ ենկիչարին
10բ | չէր թողնում հասանել ի մօտ փաշին, ըսպանում են։

Մին աստուածասէր քրիստոնայ, Միրզի որդի Ախիջան կասեն, այս եկ յառաջ, ասաց. «Ես զը զընամ սէրն Քրիստոսի խաթեր համար, թող ինձ ըսպանեն. թէ զիս կու ըսպանեն՝ դուք ձեր պատրաստութիւնն տեսէք, եթէ սաղ բաց կու թողնեն՝ գնամ պատվայի մօտն, ես մեր բանն կու չինեմ»։ Սահմանեցին պատվայ-

---

մղել զզօրսն եւ անդուլ մարտնչիլ եւ ոչ թոյլ տալ զօրուն յետս ընկրկիլ։

Իբրեւ լուան քրիստոնեայքն, զի երկու փաշայք եւս եկին յաւելան ի զօրս օսմանցւոց, եւ յամենայն կողմանց իբրեւ զաւազ ծովու բազմութեամբ պատեալ պաշարեալ սպառնային զինքեանս կլանել, | զահի հարան յերեսաց նոցա, զի զիտացին այ-
13ա նուհետեւ, թէ որչափ եւ կոտորեսցին նոքա, այլք զհետ նոցա գալ եւ լնուլ զտեղիս նոցա ոչ պակասին։ Իսկ զայս ինքեանց տեալ, պաշարեալ կային յամենայն կողմանց, իբրեւ զձկունս տեալ, պաշարեալ կային յամենայն կողմանց, իբրեւ զձկունս ի ցանց. եւ ոչ ուստեք էր լոյս նպաստութեան։ Ժողովեցան առ ի ցանց. եւ ոչ ուստեք էր լոյս նպաստութեան։ Գրիգոր վարդապետն եւ ասեն. «Զի՞նչ արասցուք, զի թշնամիքն օրըստօրէ զրաղմութիւն իւրեանց առաւելուն, եւ մեք օրըստօրէ պակասեալ նուազիմք»։ Պատասխանի ետ վարդապետն եւ ասէ. «Հրեշտակս արձակեսցուք առ նոսա խօսիլ բանս հպատակութեան եւ խնդրեսցուք զհաշտութիւն»։ Եւ ասեն. «Զո՞ առաքեսթեան եւ խնդրեսցուք զհաշտութիւն»։ Եւ ասեն. «Զո՞ առաքեսցուք առ նոսա»։ Զի երկնչէր իւրաքանչիւր ոք զայս յանձն առնուլ։ Քանզի յայլում նուազի Յարութիւն անուամբ ոմն առանուլ։ Քանզի յայլում նուազի Յարութիւն անուամբ ոմն առանուլ։ Յայնմ ի նոցանէ եւ մինչչեւ էր հասեալ նորա առ փաշայն՝ կաքեցաւ

կան քարունկ եւ ակունք, տպայլիոն տվին այս Ախիջան քրիս-
տոնին, ել գնաց, անցավ ի ջուրն Զանկու: Ենկիչարիքն եկին
վաղվաղակի, ընբռնեցին զնայ, տարան Խանէպաղ կասեն, էն
տեղն ըսպանեցին: Այս քրիստոնէս ունէր մին ծառայ, անունըն
Սարգիս, որ էյլմէածէ. այս ծառէս որ տեսավ իւր աղէն սուր
քաղեցին, այս քրիստոն ծառէն պոծավ, ենկիչարու ձեռնէն փա-
խավ: Ենկիչարիքն դառնելով ոչ կարացին ընբռնել զնայ: Եկ
եհաս ի լեռն մեծ, որ է Զանկու ջուրն անցնելով ի տակնէն նո-
րայ: Այս ծառէս, որ է անունըն Սարգիս, զինքն ձգեաց ի լեռէն
ի վայր, ոչ մեռավ եւ ոչ ուշաթափեց, պահեց Աստուած: Եկ
ի մէջ քըրիստոնէից ասաց. «Օվ եղբար իմ, մեր մեղքն բաղ-
11ա մել այ, մեղ ճար չկայ, | իմ աղէս ըսպանեցին, ես փախի,
Աստուած պահեց զիս»:

Ողորմելի քըրիստոնէքն շատ տրմեցան, լացին աղաղակե-
ցին առ Աստուած: Տէր Գրիգոր աստուածաբան վարդայ, ըս-
կըսեց պատարագ մատուցանել, բովանդակ ժողովուրդն սրբա-
յորեց, ելավ:

Վաղեան ըսկսեց օսմանցի դալ ի վերայ քաղաքին հինդ վա-

եւ զոր ինչ յանձնէք ինձ առ նա խօսիլ, խօսեցայց»: Ապա հան-
դերձեցին զնա ընծայիւք եւ արձակեցին: Գնաց ընդ նմա եւ ծա-
ռայ նորա: Իբրեւ այն ինչ մերձ եղեւ ի բանակն օսմանցւոց,
յարձակեցան ի վերայ նորա զինուորքն, կալան զնա. եւ տարեալ
զնա խոտորեցուցին ի տեղի մի եւ փողոտեցին: Իբրեւ ետես ծա-
ռայն զանցս տեառն իւրոյ, փախեաւ եւ ի պնտիլ զինուորացն
զկնի նորա՝ ընկեց զինքն ի լեռնէն բարձու ի գետն Զանգու, եւ
խնամօք Տեառն ապրեալ եհաս առ առաքիչսն իւր, պատմեաց
նոցա զամենայն անցս, որք ընդ տէր իւր անցին, եւ ասէ. «Աւա՜ղ
մեզ քրիստոնէիցս, զի մեղք մեր մեծամեծք բազմացեալ են եւ
անարժանս առնեն զմեզ ողորմութեանն Աստուծոյ»:

Յայնժամ ձայն բարձեալ ժողովրդեանն՝ ողբով մեծաւ ա-
14ա ղաղակեցին | առ Աստուած քաւիչ լինիլ եւ մի՛ արդելուլ զո-
ղորմութիւն իւր ի քրիստոնէից, եւ կոծեցան ի վերայ սպան-
նեցելոյն: Ապա վարդապետն այն ժողովեալ զժողովուրդն յե-
կեղեցին՝ մատոյց զպատարագ եւ խոստովանութեամբ մեղաց
իւրեանց պատրաստեցան եւ հաղորդեցան ի կենարար մարմնոյ
եւ յարենէ Տեառն մերոյ, եւ կային յիւրաքանչիւր տեղիս պա-
տրաստութեամբ, ուր պիտոյ էր կալ:

Եւ եղեւ ի վաղիւ անդր, որ օրն էր ուրբաթ, զօրքն օս-

չի հզօրքով: Քըրիստոնէքն բովանդակ մին տեղ եկին Զորագեղ:
Օսմանցուն հզօրն չորս բաժին եղան, դ [=4] կողմէն երիչ ա-
րին ի վերայ քաղաքին:

Օրն ուրբաթ, մտան քաղաքն: Աստուած փրկէ, Տէրն ա-
զատէ. կռիվ ելաւ յառավօտուն մինչ ի յերեկվայ պահն, զպա-
նելով օսմանցի քրիստոնէն, քրիստոնէն օսմանցուն, մինչ ի խդ
[=24] պահն: Աստուած ազատէ, Տէր փրկէ, այնչաբ յարուն
թարեց որ Զանկու ջուրն կամրայծառեց, յարունայ հոտն ի մէջ
քաղաքէն կը բուրէ, ողորմելի քըրիստոնէքն բովանդակ զսուրն
քաշեցին, ոչ մնաց քրիստոնայ. անմեղ արդարներըն դերի վա-
րեցին, կուս աղչիքունքն ջրում խեղդեվցավ, այսչաբ դերի զնաց

մանցւոց ի չորս առաջս բաժանեալք, մխեցան ի քաղաքն ի չո-
րից կողմանց: Եւ մարտ եղեալ յառաւօտէ մինչեւ ցերեկոյ, սո-
քա՝ աստի, եւ նոքա՝ անտի, խառնեցան ընդ միմեանս Հայքն
եւ օսմանցիք եւ կոտորեցին զմիմեանս, եւ այնչափ եղեւ հե-
ղումն արեան, մինչեւ կարմրանալ Զանգու գետոյն եւ երկրին՝
որ առ գետովն. եւ հոտ արեանց եւ դիականց կոտորելոցն ղբա-
ղաքն բովանդակ մինչեւ ի հեռաւոր տեղիս լցին: Եւ առաւ քա-
ղաքն յեօթներորդում աւուր ամսեանն յունիսի, յամին հազար
հարիւր եօթանասներորդի երրորդի հայկազեանս թուականի
[1724]: Կոտորեցան հզօրքն հայոց ի սուր սուսերի եւ գետա-
14բ հեղձ եղեն բա|ղումք ի նոցանէ: Ի գերութիւն վարեցին օսման-
ցիքն զկանայս նոցա եւ զմանկունս եւ տարեալ լցին զնոսա ի
բանակս իւրեանց եւ չար գործովք ապականեցին զնոսա:

Եւ այս զիա՞րդ մարթ էր լինիլ, եթէ ո՛չ մատնեալ էր զնոսա
Աստուած ի ձեռս անօրինաց: Եւ է՞ր աղաղաւ արդեօք մատնեաց
զնոսա Աստուած, զորս արեամբ Միածնի իւրոյ գնեալ եւ սըր-
բեալ, յորդեգրութիւն իւր ընկալեալ էր: Ոչ ի յօժարութենէ
իւրմէ մատնեաց Աստուած, այլ մեղք եւ անօրէնութիւնք նոցա
բռնադատեցին զարդարութիւն նորա, քանզի բազմացան մեղք
եւ անօրէնութիւնք նոցա եւ բողոքեցին յերկինս: Եւ զի՞նչ էր
պատճառն բազմանալոյ մեղաց նոցա: Այս իսկ էր, զի կարգա-
ւորք եւ աշխարհականք առ հասարակ ի բաց թողեալ զուսումն
աստուածային պատուիրանաց եւ այլ մասանց ֆրիստոնէական
վարդապետութեան՝ զբաւուք ապրիլն ըստ մարմնոյ միայն հո-
գային: Եւ թէպէտ օրըստօրէ ժամակարգութիւնք եւ պատա-
րագք լինէին յեկեղեցիս, սակայն զայս ամենայն տխմարու-
15ա թեամբ, առանց ծանօթութեան իմանալի խորհրդոցն | եւ ա-

© National Library of Armenia

11բ ի ձեռն օսմանցու։ | Գերիքն լեցվեց օսմանցու չատիրներն, մը-
նացել անտէր եւ անճանչ ողորմելի արդարքդ։ Եղավ պըղ-
ծութիւն, անօրէնութիւն, վասն քրիստոնի մեղացն, որ մեղքն
բազմացավ քըրիստոնի։

Թվին ՌՃՀԳ [1724]ումն, ունիսի Է [=7]ումն, օսմանցին
առավ քաղաքն, նստավ։ Մնաց բերդն։

(ԳԼՈՒԽ Ե·)

Աստուածայտուր կաթիղիկոսըն դնացել էր չայ Թամաղին
մոտ։ Շայ Թամաղն զռ [=6·000] զօրով դնացել է Խորասան·
կաթիղիկոսին հրայման էր տվել թէ դնայ էջմիածին։ Կաթի-

ռանց ներքին աստուածպաշտութեան կատարէին։ Եւ միով մե-
կին բանիւ ասեմ, թէ նոքա առ հասարակ միայն զսուրբ կնիքն
քրիստոնէական ունէին յոլիս իւրեանց, եւ անուամբ միայն եւ
արտաքին իրօք միայն զքրիստոնէական կրօնս պահէին, իսկ
ներքին, որ է ճանաչումն ամենասուրբ Երրորդութեան եւ մար-
դեղութեան բանին եւ փրկարար գործոց նորա եւ կրից, ըստ
պատշաճեալ իւրեանց չափուն ոչ ունէին եւ ունելոյ անփոյթք
էին, եւ ոչ դէթ ըղձային ճանաչել կամ ուսանիլ։ Եւ վասն այ-
սորիկ մի՛ ոք զարմացի, թէ զիարդ Աստուած թոյլ տայ ան-
հաւատից զայսպիսիս չար գործովք ապականել եւ ի հաւատոցն
ուրացուցանել, վասնզի որ զԱստուած ոչ ճանաչէ եւ զՔրիս-
տոսի տնօրէնութիւնսն եւ զպատուիրանսն ոչ իմանայ եւ ան-
փոյթ է ուսանիլ, այնպիսին թէպէտ եւ ոչ զայսպիսի անցս կրես-
15բ ցէ, անպիտան է ի հաւ|ատս եւ արժանի է ընդ մէջ կորելոյ եւ
զբաժին նորա ընդ անհաւատսն դնելոյ։

[ԳԼՈՒԽ Ե·]

Թէ որպէս իշխանն Երեվանայ միջնորդութեամբ Աստուածա-տուր կաթուղիկոսին զդաշն խաղաղութեան արար ընդ զօրա-գլխին օսմանցւոց, եւ ետ զբերդն Երեվանայ։

Իսկ իշխանն Երեվանայ եւ որք ընդ նմա մեծամեծքն պար-
սից եւ հայոց ի բերդի անդ ամրացեալ կային, իբրեւ այս ամե-
նայն իրք եղեն, լքան, լուծան, պարտասեցան եւ հատան ի յու-

ղիկոսն դալով էջմիածին, օսմանցին լսեց թէ կաթիղիկոսն դա-
լիս այ, հրաման ետ գՃ [=300] հզօրքի թէ՝ «Գնացէք կաթիղի-
կոսն բերէք տեղս»։ Հզօրքն դնացին, Գառնի հասին, կաթիղի-
կոսին մոտ։ Հզօրքն ասեն· «Կաթիղիկոս, փաշէն քեզ ուզում այ»։
Կաթիղիկոսն ասաց· «Հնազանդ եմ փաշին»։ Վեր ելին, եկին ի
մոտ Աբդուլայ փաշին։ Փաշէն պատվական ըսգեստ հագցուց
կաթիղիկոսին, երեք օր փաշէն պահեց իւրն մոտն կաթիղիկոսն։
Երեք օրէն յետոյ ըսկսեց փաշէն խօսել ի հետ կաթիղիկոսին թէ՝
12ա «Որպիսի կու լինի, | թուրքն բերդն տալիս չէ»։ Ասաց կաթի-
ղիկոսն· «Փորք մի համբերէ, վաղն ես դը դընամ ի մէջ բերդն,
խանին հետ կը խօսեմ, ես կառնեմ բերդն, քեզ կու տամ»։

Ելավ վաղեան կաթիղիկոսն, ել եւ դնաց ի մէջ բերդն։ Խանն
լսեց թէ կաթիղիկոսն դալիս, հրայման ետ Մահմէտ Ղասում
բէկին թէ՝ «Գնա՛յ բերդի դուռն, կաթիղիկոսն դալիս այ տեղս,
բերդի դուռն բանաս ոչ, դուն բերդի մէջէն, կաթիղիկոսն բեր-
դի դուրսէն՝ խօսացէք, տես ինչ խաբար այ բերել շայհիցն»։

սոյ զբերդն ի ձեռս իւրեանց ունելոյ, եւ այնուհետեւ զանձինս
իւրեանց միայն ապրեցուցանել հոգային։ Յառաջ քան զաւուրս
զայսոսիկ, մինչդեռ մարտնչէր օսմանցին ընդ քաղաքին Երե-
վանայ, շահ Թամաղն, որ կայր ի Թաւրէզ, ել անտի վեց հա-
զար զօրօք դնալ ի Խորասան պարսից· զի զանդիտէր այնչափ
զօրօք դալ հասանիլ ի պաշտպանութիւն Երեվանայ քաղաքին։
Եւ յելանել իւրում անտի զկաթուղիկոսն Աստուածատուր, զոր
առ իւր ունէր, որպէս ի վեր անդր պատմեցաք, արձակեաց
յիւրմէ դնալ յէջմիածին։ Իբրեւ եհաս նա անդ, լուաւ վասն
16ա նորա Աբդուլլա փաշայն եւ առաքեալ կոչեաց | զնա։ Եւ ի-
բրեւ եկն նա, ընկալաւ զնա պատուով, եւ հրամայեաց նմա
զհանդերձ չքոյ զդեցուցանել եւ նստոյց զնա առ իւր, եւ խօսե-
ցաւ ընդ նմա բաղում քաղցրութեամբ։ Եւ զերիս աւուրս չքով
մեծաւ պահէր զնա ի բանակի անդ։ Յետ այնորիկ խօսիլ սկսաւ
ընդ նմա վասն իրաց առաջիկայ պատերազմին եւ ասէ ցնա·
«Զի՞նչ արասցուք, զի յետ այսչափ նուաճելոյ մերոյ զքաղաքս
զայս, նոքա՝ որք ի ներքս ի բերդի անդ ամրացեալ կան, դեռ
եւս պնդեալ են պահել զնա եւ ոչ տան մեզ, զի խաղաղութիւն
լիցի»։ Պատասխանի ետ կաթուղիկոսն եւ ասէ· «Փոքր մի եւս
համբե՛ր, եւ ես դնացեալ խօսեցայց ընդ նոսա եւ հրահանգեցից
զնոսա ի հնազանդութիւն, եւ տացեն զբերդն»։

Իբրեւ դնաց մատեաւ կաթուղիկոսն առաջի բերդին, ազդ

© National Library of Armenia

Եկ եհաս Մահմէտ Ղասում բէն ի դուռն բերդի, կաթիղիկոսն ի դուրսն բերդէ, խօսացին: Մահմէտ Ղասում բէկն ասաց. «Շայ-հիցն ի՞նչ խաբար ունես»: Ասաց կաթիղիկոսն. «Շայհիցն ձեզ ճար չկայ, ձեր գլխու ճարն տեսէք ձեղմէն, ֆիքր արէք»:

Մահմէտ Ղասում բէկն տրմեցավ բաղումն. դարձավ գնալ մոտ ի խանին, ասաց զայս որ կաթիղիկոսն պատմել էր: Խանն բաղում տրմեցավ, լացավ, թէ՝ «Վայ մեզ, մեր թագաւորութիւնն գնաց»: Կրկին անգամ խանն ղրկեց մէլիք Սըհակն, Պրն. Կարայպետն, Պրն. Անդոնն, երեք մեծ իշխան, թէ «Գնացէք
12բ տեսէք կաթիղիկոսն, ձեզ ինչպէս մեկնութիւն կտայ»: | Եկին մէլիք Սըհակն, Պրն. Կարայպետն, Պրն. Անդոնն, եկի ի դուռն բերդի, կանգնեցան ի բաձր բերթու, խօսեցան ի հետ կաթիղիկոսի, որպէս պատմել էր Մահմէտ Ղասում բէկ: Դարձան գնացին ի մօտ խանին, որպէս ասացել էր կաթիղիկոսն: Խանն տրմեցավ բաղումն:

Խանն հրայմանեայց, խնդրեց Մահմէտ Ղասում բէկին,

եղեւ իշխանին, թէ կաթուղիկոսն եկեալ կայ առաջի բերդիս:
16բ Եւ առաքեաց նա զմի ոմն յառաջակայից իւրոց | խօսիլ ընդ նմա ի ներքուստ եւ հարցանել, թէ վասն որո՞ց իրաց եկեալ իցէ, եւ զի՞նչ լուր ունիցի ի շահ Թամաղէն: Եկն եկաց նա ի տեղին խօսելոյ, եհարց զկաթուղիկոսն եւ ասէ. «Վասն որո՞ց իրաց եկեալ ես, եւ զի՞նչ լուր է ի շահէն մերմէ»: Պատասխանի ետ կաթուղիկոսն, թէ «Զեզ անտի նպաստութիւն ինչ լինելոյ ոչ գոյ ինչ յոյս, այլ դուք ձեղէն զօգուտն անձանց ձերոց խորհեցարուք»: Իբրեւ լուաւ զայս իշխանն, յոյժ տրտմեցաւ եւ աւաղս եւ եղուկս կարդաց անձին իւրում եւ ելաց: Եւ առաքեաց զերիս ի մեծամեծացն հայոց զորս առ իւր ունէր, զԿարապետն, զՍահակն եւ զԱնտոնն եւ ասէ. «Գնացէ՛ք տեսէ՛ք, զի՞նչ կամի բանիւն այնու ծանուցանել մեզ կաթուղիկոսն ձեր»: Իբրեւ եկին, պատմեաց նոցա կաթուղիկոսն զիրս շահ Թամաղին, եւ եցոյց նոցա զխաղաղութեան բանսն փաշային, թէ «Խոստացաւ
17ա խաղաղութեամբ արձակել զձեզ, եթէ խա|ղաղութեամբ տայցէք նմա զբերդն»: Եւ երթեալ պատմեցին զբանս զայս իշխանին, եւ կաթուղիկոսն գնաց անտի պատասխանի առնել փաշային. եւ խնդրեաց զաւուրս ինչ լռել, մինչեւ խորհեսցին, եւ ինքն գնաց յէջմիածին:

Յայնժամ իշխանն զմեծամեծս իւր ժողովեաց ի խորհուրդ, թէ զի՞նչ արասցեն: Եւ եղեւ ի խորհիլն նոցա, մի ոմն ի նոցա-

Սալայխան բէկին, Մինայխօռին, Ջառջի բաշուն, Ըռէհանլու Շհալի բէգին, Բայադ Աբաս Ալի բէկին, Հաջի Էլիազցի Աբաս խան բէկին, Ղաջար Ըռայմազան բէկին, Դամուր Բուլաղցի Նաղչալի բէկին, բովանդակ խնդրեց խանըն, եկին ի տուն խանի, իւրեանց մէջն արարին խորհուրդ: Մէժլում-բէկն ասաց. «Բերդն տանք»: Ջառչի բաշին ասաց. «Ձէք տալ, թէ որ տվինք բերդն մեր, մեր տուն եւ տեղ դերի կու վարէ օսմանցին»: Մահմէտ Ղասում բէկն ասաց. «Ես էլ մին խորհուրդ ունեմ, ասեմ»: Խանըն ասաց. «Հրայման է, ասայ»: Ասաց Մահմէտ Ղասում բէկն զխորհուրդն իւր թէ՝ «Խանըն ողջ լինի, թէ որ քաղաքն
13ա կտաք ի ձեռն օսմանցու, խղրիր | նորայ հետ խորհուր արարէ»: Խանն լսեց, հավանեցավ այս խորհուրդիս: Խանըն խնդրեց բերթի մէջի քըրիստոնէքն բերին ի տունըն խանին: Ասաց խանըն թէ «Պրն. մելիք Սըհակ, կամ Պրն. Կարայպետ, մեր շայհիցն մեզ ճար չկայ, իմ մեծամեծ իշխանքներս բերդն տանք օսմանցուն. դուք ի՞նչ կասէք»: Հայքն ասեն. «Խանըն ողջ լինի, դուն գիտես, ինչ որ կանես մեզ դաբել այ»: Ասաց խանըն թէ՝ «Մահմէտ Ղասում բէկն ասում այ, ղրկենք կաթիղիկոսն դայ տեղս, տեսնենք կաթիղիկոսն ինչ կասայ»: Քըրիստոնէքս ասեն. «Բավական այ, խանըն ողջ լինի»: Սորանք էլ հավանեցան այս բանիս, խորհեցին որ ղրկեն ի հետեւ կաթիղիկոսի:

նէ, որոյ անունն էր Մէժլում բէկ, ասէ. «Ինձ թուի, թէ հարկ է մեզ տալ զբերդն, եւ լաւ լինի մեզ դաշամբ ազատութեան անձանց մերոց տալ զնա, քան ընդդիմանալ նոցա յաւուրս ինչ եւ կորուսանել միանգամայն զսա եւ զանձինս մեր»: Պատասխանի ետ եւ այլ ոմն ի բաղմելոցն, որ Ջէրչի-բաշի անուանեալն էր, եւ ասէ. «Եթէ տայք օսմանցւոց զբերդս զայս, ստուգիւ գիտասջիք, զի զտունս մեր աւար հարկանեն եւ զընդանիս մեր ի գերութիւն վարեն. վասնզի թէպէտ եւ այժմ ազատ արձակել զմեզ խոստանան, բայց յետ տալոյ մերոյ զբերդն՝ ստեն»: Ապա ետ պատասխանի եւ այլ ոմն ի նոցանէ եւ ասէ. «Ոչ այդպէս, այլ զկաթուղիկոսն հայոց ի ներքս առցուք՝ տեղեկանալ միւս-
17բ |անգամ ի նմանէ վասն իրիս այսորիկ»: Յայնժամ Միհրալին զբանս զայսոսիկ, զորս ասացին առաջաքայքն իւր, եղ առաջի մեծամեծացն հայոց, զորս ի բերդն ընկալեալ էր, եւ ասէ, թէ «Այսպէս եւ այնպէս ասացին պարոնայքն մեր վասն բերդիս եւ վասն անձանց մերոց. եւ արդ դուք զի՞նչ ասէք»: Պատասխանի ետուն նոքա եւ ասեն. «Հրամանքն քո է»: Ապա ասէ Միհրալին.

© National Library of Armenia

Բերդի թուրքն ոչ կարէ դուս լինել ի բերդէն, մանավանդ՝ թէ որ թուրքն բերթիցն դուս դտանի, օսմանցին շուտով կու ըսպանէ, վախում են մարդ ղրկել կաթիղիկոսին: Հայքերն ասացին. «Խանըն ողջ լինի, մին մարդ ղրկէք փաշի, կաթիղիկոսն բերել տայ, փաշէն ղրկայ տեղս որ հաշտութիւնն առնէք»: Խանըն հավանեցավ այս խօսացն քրիստոնի, բերին Պրն. Անդոնըն, բերդի պատէն հետ պարանօք թողին վայր: Ենկիչարիքն վաղվաղակի եկի ընբռնեցին զնայ, տանելով ի մոտ փաշի, գնացին
13բ եհացի մոտն փաշին: | Եհարց փաշէն. «Այ քրիստոնեայ, թէ դուն ո՞ւր ես գնում»: Ասաց քրիստոնէս թէ՝ «Գիր եմ բեր քեզ»: Եհան սրգիրն, յետ ի ձեռն փաշի: Փաշէն երաց գիրն, կարդաց, քրիստոնէն տեղն պահեց. ծ [= 50] հզօրք ղրկեց հետեւըն կաթիղիկոսի: Գնացին եհացին էջմիածին հզօրքն փաշին՝ մինչ ի երեք ժամն: Հզօրքն ասաց. «Կաթիղիկոս, փաշէն քեզ ուզում այ»: Ասաց. «Հնազանդ եմ»:

Կաթիղիկոսն լսեց, ահիւ եւ դողութեամբ հեծանել զձին,

«Առաքեսցուք զոմն բերել զկաթուղիկոսն առ մեզ»: Բայց ոչ զոք՝ ի պարսկաց անտի համարձակեցան յղել, քանզի ստուգիւ գիտէին, զի օսմանցիքն ընդ դտանելն զոք ի պարսկաց անտի արտաքոյ բերդին՝ նոյն ժամայն խողխողէին:

Ապա սահմանեցին զմի ոմն ի հայոց անտի առաքել հրովարտակօք առ փաշայն եւ խնդրել ի նմանէ, զի զկաթուղիկոսն հայոց միւսանգամ ի բերդն յղեսցէ, որպէսզի միջնորդութեամբ
18ա նորա դաշն խաղաղութեան հաստատեսցի: | Եւ հանդերձեցին զպարոն Անտոնն առաքել. եւ իջուցին զնա առասանաւ ի պարըսպէ անտի ի վայր, զի զդրունս բերդին ոչ կամէին բանալ, թէպէտ եւ սպիտակ նշանակն խաղաղութեան արդէն կանգնեալ էին ի յամբարտակի անդ բերդին: Իբրեւ գնացեալ մերձեցաւ նա ի բանակն օսմանցւոց, հասին ի վերայ նորա ոմանք ի զօրուէն եւ ածին զնա առ փաշայն, թէ «Դու ուստի՞ եւ ո՞ւր ուղղեալ էիր գնալ»: Պատասխանի ետ Անտոնն. «Ի բերդէ անտի առաքեցեալ եմ բերել զգիր առ վսեմութիւնդ»: Եւ հանեալ ըզգիրն ետ ցփաշայն: Իբրեւ ծանեաւ փաշայն զգրեալսն, առաքեաց վաղվաղակի ի զօրականաց իւրոց յէջմիածին՝ բերել զկաթուղիկոսն առ իւր: Իբրեւ եկն կաթուղիկոսն եւ եկաց առաջի, հրաման ետ նմա փաշայն բաղմիլ. եւ խօսեցաւ ընդ նմա եւ ասէ.

1. Ձեռագիրը ունէր՝ զոչ ոք:

դողոր հրայմանըն փաշին: Երբ եհաս ի տուն փաշի, ետես որ Պրն. Անդոնըն տեղն նստաց: Փաշէն նըսածուց կաթիղիկոսին: Ասաց փաշէն թէ՝ «Կաթիղիկոս, խանըն քեզ ուզել այ, գնայ, տես ինչ այ ուսում»: Ասաց կաթիղիկոսն. «Հրամանըն քոյին»: Փաշէն Պրն. Անդոնին պահեց, կաթիղիկոս ղրկեց: Ի մէջ բերթի գնաց, եհաս ըսբերթն, եկին մեծ մեծ իշխանքներըն, ուրախացան, ուրախութեամբ տանելով ի տուն խանի: Գնաց եհաս ի տունըն խանի, տեսավ ըսխանըն: Խանըն խնդրեց որչաբ որ իշխան ունէր խանըն, եկին տեղն, նստեցան, մասլհաթ արի, բովայդակ հնազանդեցան կաթիղիկոսին: Խանըն հավանեց կաթիղիկոսի խորհուրդին:

14ա | Ըսկսեց կաթիղիկոսըն դալ ի մոտ փաշի, դալ եհաս ի մոտն փաշի: Հրայման ետ փաշէն կաթիղիկոսին, նստեցավ, հարցուցանէր փաշէն թէ՝ «Ի՞նչ խնդիրք ունի Միհրալի խանին»: Ասաց կաթիղիկոսն. «Փաշէն ողջ լինի, կուզեմ ձեր մէջն հաշտութիւն պարքեվենք»: Փաշէն հավանեց այս խօսացն, հաղցուց ըզգեստ պատվական: Կաթիղիկոսն ասաց. «Փաշէն ողջ լինի՝ մին բան խնդիրք ունեմ քեզանէ»: Փաշէն ասաց. «Ասա խնդիրքդ քոյ»: Ասաց խնդիրքն կաթիղիկոսն թէ՝ «Փաշէն ողջ լինի, խնդիրքս այս է, որ Մէհրալի խանին ըսպանես ոչ, բաց թողնիս, գնայ ի մոտ շային»: Փաշէն երդնմեցավ թէ՝ «Զեմ ըսպանել, գնայ ի մոտ շային»:

Եւ կաթիղիկոսն գնալով ի մէջ բերդի, գնաց եհաս ի մոտն փաշին, հաշտութիւն ձգեց իւրեանց մէջն: Կաթիղիկոսն գռ. [=

«Միհրալի խանն խնդրէ զքեզ. երթ առ նա եւ տե՛ս՝ զինչ բանք են նորա առ մեզ»:

Եւ եկն կաթուղիկոսն ի դուռն բերդին: Առին զնա ի ներքս,
18բ եւ | ածին յապարանս իշխանին: Եւ ամենայն մեծամեծքն պարսից եւ հայոց ժողովեցան անդ եւ ակն կալեալ սպասէին բանից նորա, որպէս զի զիարդ ինչ առնել ցուցցէ նա վասն զանձինս իւրեանց ապրեցուցանելոյ, այնպէս առնիցեն: Ապա կաթուղիկոսն բաղում բանիւք յուսադիր արարեալ զնոսա՝ հաւանեցոյց հաւատալ խոստման փաշային եւ տալ զբերդն:

Եւ առեալ ի նոցանէ զբանս տալոյ բերդին, եկ գնաց առ փաշայն: Եւ մատուցեալ նմա զպատգամս նոցա՝ աղաչեաց զփաշայն զդաշինսն աղատ արձակելոյ զնոսա հաստատել: Ցանձն էառ զայս փաշայն եւ խիլայս պարգեւեաց կաթուղիկոսին: Ապա կարգեաց զզօրս իբրեւ զերիս հազարս՝ երթալ ընդ կաթուղիկոսին,

© National Library of Armenia

3·000] ենկիչաւի առաւ հետն իւր, գնաց ի մոտն, հրայման ետ կաթիղիկոսն թէ՝ «Դուռն բացէք բերդի»:

Բացի ի դուռն բերդի, բերդի յառաջ մտաւ կաթիղիկոսն, գռ [=3·000] ենկիչարի յետնէն, գնացին բերդի մէջն: Ենկիչարին վաղվաղակի գնաց պահեաց ըսթօփերն, յետոյ գն [=300]
14բ բէյլրաղ մտաւ բերթի մէջն: | Կաթիղիկոսն նստաւ ի մէջ բերդին, մինչ ի օսմանցու հղօրքն բօվանտակ գնաց բերդի մէջն: Երեք յավուրէն յետոյ կաթիղիկոսն եկ ի դուրս բերթէն, փաշին հետ ըսկսեցին գնալ ի մէջ բերթն: Գնացի հասին բերդն· փաշէն գնաց Մահմէտ Ղասում բէկի տանն իջաւ, կաթիղիկոսն գնաց հետեւ խանին, եհաս ի տուն խանի: Խանըն ասաց· «Խալիֆայ, վախում եմ»: Կաթիղիկոսն ասաց· «Վախել մի՛»: Ելաւ խանըն վախելօվ, դալ ի մոտն փաշի, կաթիղիկոսն միմեանց հաշտացուց, համբուրեց միմեանց: Դիշերն տեղն կացին կաթիղիկոսին հետ: Վաղեան կաթիղիկոսն հրայման ուղեց փաշէցն թէ՝ «Խանըն ուղում այ գնայ»: Փաշէն ասաց· «բն [=200] հղօրք կը գնեմ հետն, գնայ»: Եդ բն [=200] հղօրք ի հետ նորա, կաթիղիկոսին հետ գնացին մինչ ի զ [=6] օրն, յանձացըրին, դարձաւ կաթիղիկոսն, եկ ի քաղաքն:

Հրայման ետ փաշէն, ինչ որ թուրք կայ բերդին մէջն բո-
15ա վանդակ՝ դուս լինին: | Բօվանդակ դուս արաւ, էլ ոչ մնաց թուրք ի մէջ բերդին: Փաշէն հրայմանեց թէ՝ «Մահմէտ Ղասում բէկի՝ սուլթան Ահմուտն ուղել այ, մին Աբաս Ալի բէկին,

---

մատուցանել զդիրն հաշտութեան եւ մտանել ի բերդն: Գնաց կաթուղիկոսն կարդեալ զինուորքն, մերձեցաւ ի բերդ անդ եւ մատոյց նոցա զդիրն: Առին նոքա զդիրն եւ տեսին՝ զինչ դրեալ էր, եւ բացին նոցա զդուռն: Եւ յառաջ եմուտ ի ներքս կաթուղիկոսն, եւ զօրքն զկնի: Եւ փութացեալ զինուորացն՝ կալան
19ա | զդրան բերդին պահել: Կաթուղիկոսն նստաւ ի հրապարակի բերդին, մինչեւ ամենայն զօրքն օսմանցւոց ի ներքս մտին խաղաղութեամբ:

Ապա ել գնաց Միհրալի խանն եւ կաթուղիկոսն ընդ նմա՝ յանդիման լինիլ փաշային եւ յարդել զնա առաջակայիւք եւ զօրագլխօքն իւրովք հանդերձ: Եւ ընկալեալ եղեւ Միհրալի խանն ի փաշայէն համբուրիւ խաղաղութեան:

Հրաման ետ փաշայն, զի ամենայն պարսիկքն ի բերդէ անտի արտաքս ելցեն: Եւ ամենեքեան ելին: Եւ ապա ասէ՝ թէ՝ «Զղասում բէկն, զՇհալի բէկն եւ զԱբասալի բէկն ի Կոստանդ-

մին էլ Շհալի բէկի»: Այս երեք մեծքըս ուղեց փաշէն, թէ ղըրկում եմ թագաւորին մոտ: Վեր կալան տարան քաղաքէն դուրս, դրին ի մէջ ջվալի, ձգեցին դետն Զէնկու: Եղաւ իւրեանց հաշտութիւնն: Կաթիղիկոսն գնաց էջմիածին, հանդարտեցաւ օսմանցին ի մէջ քաղաքն:

Թվին ՌՃՀԳ [1724] ումն, օգոստոսի ի [20] մին (sic), եղաւ վերջ, հանդարտեցաւ օսմանցին, միչ ի նուեմբերն:

(ԳԼՈՒԽ Զ·)

Նուեմբեր ամսի զ [=6] ումն, սուլթան Ահմատիցն մին դիր եկ հաս ի ձեռն փաշի: Բաց եւ կարդաց դիրն· հրայման այ տվել դաղայորն որ՝ «Գնա՛յ ի վերայ Թարվէզու»: Ետես պատրաստութիւն իւր մինչ ի փետրվարի ամիսն, թվին ՌՃՀԴ [1725]

նուպօլիս առաքելոց եմ, քանզի խնդրեաց զսոսա Ահմէտ սուլտանն մեր»: Եւ էառ զերիս զայսոսիկ եւ ետ դնել ի քուրձ մի եւ հրամայեաց ընկենուլ ի Զանգու դետն, եւ այնպէս կորոյս զնոսա: Իսկ զՄիհրալին եւ զայլ առաջակայսն խաղաղութեամբ արձակեաց երթալ ուր եւ կամեսցին: Եւ յետ վճարելոյ ամենայնի եւ խաղաղելոյ զօրացն օսմանցւոց՝ գնաց կաթուղիկոսն յէջմիածին:

19բ | Ցամին ՌՃՀԳ [1724], օգոստոսի իա [21] նուաճեցաւ բոլոր Երեվան քաղաքն ընդ իշխանութեամբ օսմանցւոց, եւ զտեղի էառ անդէն զօրն օսմանցւոց մինչեւ ի նոյեմբեր:

[ԳԼՈՒԽ Զ·]

Թէ որպիսի մարտիւ պատերազմի խոյ[1] եւ Թաւրէզ քաղաքի պարսից առան յօսմանցւոց:

Ցամին հազարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի երրորդի հայկազեանս թուականի [1724], ի վեցերորդում աւուրն նոյեմբերի, եհաս հրովարտակ յօսմանցւոց սուլթանէն առ Աբդուլլա փաշայն՝ երթալ ի վերայ Թաւրէզու: Եւ սկսաւ կար-

1· Ձեռագիրը ունէր՝ խոյա:

© National Library of Armenia

ումն, եկ ի թաշ, գնալով ի վերայ Թարվէզու: Ըսկիզբն գնաց
ի վերայ Խոյու: Եհաս փաշէն ի մոտն Խոյայ, քրիստոնէքն մտել
է ի մէջն բերդն Խոյու, դ [=4] կողմէ տաջիդի գեղարէնքն, մինչ
ի մին ժ [=10] գեղ եկել են մտել ի մէջ Խոյոյ բերթ: Որ եհաս
15բ փաշէն, հայքն ուղեցին Խոյ տայն օսմանցու: | Բերդի թուր-
քերն բարկացան ոյժ բաղում, ասաց. «Մենք չէք տալ»: Արա-
բին զխորհուրդն չար իւրեանցն մէջն, իւրեանց մէջի քըրիստո-
նէն սուրն քաշեն: Քըրիստոնէքըն յիմացան, ոչ կարացին խո-
սել հետն իւրեանց թուրքի:

Ըսկսեց փաշէ թօփերն սահմանել. սահմանեց թօփերն ի վե-
րայ քաղաքին կամ բերթին, կրակելով թօփերն ի վերայ բեր-
դի, մինչ ի խ [=40] օրն, կրակն լից ի վերայ քաղաք: Խ [=
40] օրն եղավ, օսմանցին երիշ արավ բերդին, բովանդակ իւր
հզօրվն զօրայգունեղ եմուտ քաղաքն, եղավ պատերազմուն
մինչ ի զ [=6] պահն: Օսմանցին սուրն քաշեց, բովանդակ գե-
բրայ վարեց քըրիստոնէք, շատ յարունհեղութիւն եղավ տեղն
Խոյոյ: Փաշէն հանդարդեցավ տեղն մինչ ի իը [=28] օր: Իը
[=28] օրէն յետ՝ եկ ի վեր, գնալով ի վերայ Թարվէզն, բաց
եթող ի մէջ Խոյոյ խ [=40] բէյրաղ, գնալով ի վերայ Թար-
վէզու:

ղել զզօրսն ամենայն պիտոյից պատրաստութեամբ: Եւ ի լրա-
նալ ամենայն պատրաստութեանցն եկ ի ճանապարհ՝ գնալ ի
վերայ Թաւրիզու յամսեանն փետրուարի յամին Ռ երորդի
Ճ երորդի ՀԴ երորդի [1725]: Եւ յառաջ եհաս նա ի գաւառն
Խոյայ: Եւ եղեւ ի մերձենալ նորա ի Խոյ՝ ամենայն պարսիկք
դիւզօրէիցն նորա փութացեալ մտին ի բերդն Խոյոյ, ուր էին
մտեալ եւ հայք բաղումք: Եւ յորժամ ի պաշարման եղեալ նե-
ղեցան եւ տաղնապէին, ոմանք յառաջակայիցն հայոց կամէին,
զի տացի բերդն, իսկ պարսիկք բարկացեալ ընդ այն՝ խորհէին
զհայսն կոտորել եւ կորուսանել ի միջոյ իւրեանց. զի ասէին,
20ա թէ «Ոչ կամիմք օսմանցւոց տալ | զբերդն»: Եւ լուռ եղեն հայքն:
Ապա օսմանցին զզօրսն կառոյց ընդդէմ բերդին եւ զաւուրս խ
[40] արձակեալ՝ զբաղում աւերս եւ զկոտորումն էած ի վերայ
նորա: Ապա զզօրսն յառաջ մղեաց միանդամայն եւ եմուտ ի
քաղաքն եւ էառ զբերդս: Եւ մինչեւ ցվեց ժամ կոտորելով զհա-
կամարտսն, որք էին պարսիկք, սրով սուսերի ելից դիակամբ
զբերդն. եւ զքրիստոնեայսն գերի վարեաց: Եւ յետ նուաճե-
լոյ զբերդն Խոյայ՝ զիը [28] օր եկաց անդ փաշայն օսմանցւոց

Աբդուլայ փաշէն գնալս Թարվէզ, սուլթան Ահմատիցն մին
գիր եկ ի ձեռ փաշին: Հայեցավ եւ կարդաց: Գրել էր սուլթան
Ահմատն թէ՝ «Հասան փաշին հրաման տվի որ գնայ Քրման-
16ա շայու վերայ Համատանայ»: Հասան փաշէն Համադան | գնա-
լով, Աբդուլայ փաշէն Թարվէզ, ըսկսեցին իւրեանց պատերազ-
մունքն: Աբդուլայ փաշէն գնաց եհաս Մարանդ, որ է Նոյայ
մայրն թաղած է տեղն, ան գեղին Մարանն կասեն, անդ-մարնդ:
Բօվանդակ առավ, ան երկիներն, պռծավ: Ըսկսեց գնալ ի վե-
րայ Թարվէզու, արգելով թօբերն, եւ իւր մեծ բաղում հզօրքն
գնալով եհաս Սօհինեան կասեն, մին գեղ այ, գռ [=300] տուն
այ, այս գեղիս մարդն գնացել այ Թարվէզ, ոչ կայ չէնութիւն
ի մէջ գեղուն: գ [=3] օր տեղն նստավ փաշէ, գ [=3] օրէն
յետ վեր կացավ գնալով Թարվէզ, գնաց եհաս Շօր-Ջուր կասեն
տեղի, որ է բ [=2] ժամ ճանայպարհ: Փորքն փորքն յառաջ
գնալով, յիմացան Թարվէզու հզօրքն: Դուս եկին կռիվ, Թար-
վէզու խանն, որ է անունն Ալայ Ղուլի խան, դուս եկ իւր մեծ
բաղում հզօրքվն, եղավ իւրեանց պատերազմունքն: Այլ Ղու-
լի խանի հզօրքն յախդվեցավ. ծռ [=10·000] մարդ սրով ան-

եւ յետ այնորիկ ի մասնէ զօրաց իւրոց պահապանս կացուցեալ
ի բերդի անդ՝ խաղացոյց անտի զզօրսն՝ գնալ ի վերայ Թաւ-
րիզու:

Ընդ այն աւուրսն Հասան փաշայն առաքեցաւ ի Համատան,
որպէս ցուցանէր զայս հրովարտակն, որ եհաս Աբդուլլա փա-
շային ի սուլտանէ իւրմէ, յորում գրեալ էր, թէ «Հրաման ե-
տու Հասան փաշային՝ երթալ ի վերայ Համատանայ»: Եւ ինքն
Աբդուլլայն, որ ուղղեցաւ գնալ ի Թաւրէզ, երթայր յուշիկ՝
նուաճելով՝ զգաւառսն, յորս հասանէր: Եհաս ի Մարանդ գիւ-
ղաքաղաք, որոյ բնակիչքն համբաւեն, թէ անդ թաղեալ կայ
մայրն Նոյի, զՄարանդ անունն ստուգաբանելով՝ մայր-անդ.
եւ էառ զգաւառն զայն բովանդակ: Եւ անտի յառաջ խաղայր
գնայր, եւ գնալով եհաս ի Սօֆիա գիւղաքաղաք, եւ եդիտ զնա
20բ անմարդի, ամայի | լեալ ի բնակչաց իւրոց, զի բնակիչք նորա
առեալ զլուր կոտորածի եւ գերութեան Երեվանայ՝ փախուցեալ
էին ի Թաւրէզ: Յետ սորա եհաս ի տեղի մի Շօր-Ջուր անուա-
նեալ, որ մերձ է Թաւրէզու: Ադդ եղեւ իշխանին Թաւրէզու, ո-
րոյ անունն էր Ալայ-ղուլի. եկ ընդդէմ նմա բաղում զօրօք եւ
մարտեաւ ընդ Աբդուլլա փաշային, ի պարտութիւն մատնեցաւ
նա, եւ անկան ի զօրաց նորա իբրեւ տասն ռ [10·000]: Եւ ինքն

© National Library of Armenia

ցան, փախաւ Ալայ Ղուլի խան, եմուտ ի մէջ քաղաքն, ոչ դուս
եկաւ:

Աբդուլայ փաշէն սահմանեց իւր թօրերն կ [= 60], հայ-
նապազ կրակելով ի վերայ քաղաքին, մինչ ի կ [= 60] օրն:
16բ կ [= 60] օրն թամամվեցաւ, ըսկսեց փաշէն իւր հզօրքն | երիշ
անել քաղաքին, թօրերն կրակելով ի վերայ քաղաքի յօժարու-
թեանն եմուտ քաղաքն, եկաւ կռիվ ի մէջ քաղաքին, մինչ ի
եօթն օրն սուր սրեղի եղաւ ի մէջ քաղաքն, շատ բազում հզօրս
անցաւ Թարվէզու, այլոց յիմանալովն ձեռ [= 85·000] հզօրք
անցաւ սրով: Առաւ քաղաքն, հանդարդեցաւ Աբդուլայ փաշէն,
ըսկսեց իւր հզօրքն տեսանել թէ որչայբ այ մնացեալ. տեսաւ
հզօրքն ՃԾԸ [= 158] հզօրիցն մնացել էր ԽԲՌ [= 42·000] հը-
զօրք: Անցեալն գնացեալն բովանդակ սրով անցաւ, առաւ նը-
տաւ մայրաքաղաք, անթիվ հզօրէն գերայվարք գերիքն քաշեց
17ա օսմանցին եկ ի մէջ քաղաքն, վերջ ասելոյ: | Վերջայորայպէս
էառ զԹարվէզ Աբդուլայ փաշէն, նստեցեալ ի մէջ քաղաքին ե-
րեք ամիս: Յետոյ երեք ամսոյ՝ վերջայպէս իւր հզօրքն բովան-

մնացեալ զօրքն ի փախուստ դարձեալ՝ եմուտ ի Թաւրէզ քա-
ղաքն եւ անդ ամրացաւ:

Իսկ զօրքն օսմանցւոց յառաջ խաղացեալ՝ եկին պատեցին
պաշարեցին զԹաւրէզ եւ կարգեալ կառուցին զդոբսն՝ արձակել
ի վերայ քաղաքին: Եւ զկ [60] օր հանապազ հրացանօք եւ դո-
բիւք հրձիգ արարեալ զչինուածսն նորա զփայտակերտս եւ կա-
ւակերտսն քանդեալ կործանեցին: Եւ յետ կ [60] աւուր, իբրեւ
ետես Աբդուլլայն, զի տակաւին յամառեալ պնտեալ ընդդէմ
կան, հրաման ետ ամենայն զօրացն առ հասարակ յառաջ խա-
ղալ եւ ի քաղաք անդ մխել եւ միանգամայն զդոբսն ի վերայ
արձակել[2]: Եւ նոցա ամենեցուն առ հասարակ գաղանաբար յար-
21ա ձակեալք՝ մխեցան ի քաղաք անդ եւ զաւուրս | եօթն մարտ ե-
դեալ ընդ հակամարտսն՝ զուիթսուն եւ հինգ ռ [85·000] զօրս
կոտորեցին, եւ առին նուաճեցին զքաղաքն: Եւ զժողովուրդ քա-
ղաքին եւ զկանայս եւ զմանկունս նոցա գերեցին, եւ յաւար
առին զստացուածս նոցա: Իբրեւ դադարեցան ի կոտորելոյ, եւ
խաղաղեցաւ քաղաքն, հանդէս արար զօրաց իւրոց Աբդուլլա
փաշայն, եւ ետես զի ի հարիւր յիսուն եւ ութ հազարացն քա-
ռասուն եւ երկու հազար միայն մնացեալ էր: Իբրեւ անցին ա-
ւուրք ամսոյ միոյ յետ նուաճելոյ զաւառին Թաւրիզու, անկաւ

2· Լուսանցքին վրայ գրուած է· ձայն հրացանաց, ձայն դոբից եւն.:

տակ հիվանդացան, ի մէջ իւրեանց անկեալ է մահ տարաժամ,
Աստուած բարկացեալ ի սոցանց: Ոմանք փախին, ոմանք մնա-
ցին, ոմանք տարաժամօվ անցան:

հիւանդութիւն մահու ի զօրսն օսմանցւոց, քանզի եհար զնոսա
բարկութիւնն Աստուծոյ յաղագս անպատմելի եղեռնագործու-
թեան նոցա, զոր արարին եւ առնէին անողորմութեամբ իւ-
րեանց եւ չնաբարոյ գազրագործութեամբ: Եւ ի հիւանդութենէ
աստի բազումք սատակեցան եւ բազումք եւս գաղտագնաց փա-
խըստական եղեալ՝ ցրուեցան, եւ եղեւ յոյժ նուազութիւն զօ-
բացն օսմանցւոց:

(Շար· 2) Հրտ· Հ· ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

© National Library of Armenia